Հավելված N 1
ՀՀ վարչապետի 2009 թ.
ապրիլի -ի N - Ա
որոշման

Կ Ա Զ Մ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼԻՐ
ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ԱՋԱԿՑՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

Հայաստանի Հանրապետության վարչապետի խորհրդական (աշխատանքային խմբի ղեկավար)

Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության ներկայացուցիչ

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության ներկայացուցիչ

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության ներկայացուցիչ

Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչ

Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ներկայացուցիչ

Հայաստանի Հանրապետության առևտրաարդյունաբերական պալատի ներկայացուցիչ (համաձայնությամբ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

09_325

Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2009 թ.
ապրիլի -ի N - Ա
որոշման

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼԻՐ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ԱՋԱԿՑՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

1. Սույն աշխատակարգով կանոնակարգվում են ճանապարհների թողունակության բարձրացման, կանգառ և կայանում կատարած տրանսպորտային միջոցներով երթևեկելի մասերի ծանրաբեռնվածության նվազեցման, հասարակական տրանսպորտի կանգառների կանոնակարգման և կահավորման ծրագրի արդյունավետ իրականացումն ապահովող աշխատանքային խմբի գործունեության հիմնական սկզբունքները։

2. Աշխատանքային խումբն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության կառավարության ու Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներով, սույն աշխատակարգով և այլ իրավական ակտերով։

3. Աշխատանքային խումբը Հայաստանի Հանրապետության կառավարության խորհրդատուն է՝ տրանսպորտի, երթևեկության և ավտոկայանատեղերի գործունեության կանոնակարգմանն առնչվող հարցերում։

4. Աշխատանքային խմբի նպատակներն են՝

1) աջակցության ցուցաբերումը, մասնագիտական խորհրդատվության և մասնագիտական փորձագիտական եզրակացությունների տրամադրումը Հայաստանի Հանրա-

պետության կառավարության 2007 թվականի հուլիսի 26-ի N 957-Ն որոշմամբ հաստատված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) ժամանակացույցում ներառված պատասխանատու կատարող (համակատարող) պետական մարմիններին տվյալ միջոցառման հիման վրա ներկայացված առաջարկությունների մասին.

2) տրանսպորտի և երթևեկության ոլորտում գործող օրենսդրությունը միջազգային ստանդարտներին համապատասխանեցնելու վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը, Հայաստանի Հանրապետության, մասնավորապես, Երևան քաղաքի պայմաններին համապատասխան առավել նպաստավոր ստանդարտների մշակումը.

3) ճանապարհաշինության, ինչպես նաև տրանսպորտի երթևեկությանն ու անվտանգությանն առնչվող բոլոր հարցերի, նախագծերի, սխեմաների և առաջարկների մասին փորձագիտական եզրակացության տրամադրումը։

5. Աշխատանքային խմբի խնդիրներն են՝

1) ուսումնասիրության կատարման նպատակով Երևան քաղաքի փողոցները 3 խմբի (գլխավոր, երկրորդական և այլ) բաժանելու վերաբերյալ առաջարկություն ներկայացնելը.

2) երթևեկության կառավարման և անհրաժեշտ ծախսերի նախահաշվի վերաբերյալ առաջարկություն ներկայացնելը.

3) առաջարկությունների ընդունման դեպքում անհրաժեշտ միջոցառումների իրականացման համար մրցութային փաստաթղթերի փաթեթի մշակումը.

4) կենտրոնական ղեկավարման կետի անհրաժեշտության ուսումնասիրումը և անհրաժեշտության դեպքում առաջարկություններ ներկայացնելը.

5) կենտրոնական ղեկավարման կետի բոլոր կապուղիների սխեմաների, կետերի տեղակայման առավել նպատակահարմար վայրի, դրա կահավորման ձևի, սարքավորումների տեսակների և ընդհանուր տեսքի վերաբերյալ առաջարկությունների տրամադրումը.

6) քաղաքային հասարակական տրանսպորտի կենտրոնացման և պետականացման վերաբերյալ առաջարկություն ներկայացնելը.

7) ուղևորափոխադրումների որակի և երթևեկության կազմակերպման վիճակի բարելավման նպատակով հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպման ու կառավարման գործակարգավարական ծառայության մակարդակն ավտոմատացման հասցնելու վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը.

8) հասարակական տրանսպորտի և երթևեկության զարգացման գործընթացների կարգավորման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը։

6. Աշխատանքային խումբն իր գործունեությամբ հաշվետու է Հայաստանի Հանրապետության վարչապետին։

7. Աշխատանքային խումբն իր նիստերի ընթացքում քննության է առնում ներկայացված առաջարկությունները (ծրագրեր, նախագծեր և այլն) և տրամադրում դրանց վերաբերյալ եզրակացություններ։

8. Աշխատանքային խումբը կազմված է ղեկավարից և անդամներից, ովքեր աշխատանքային խմբի աշխատանքներին մասնակցում են հասարակական հիմունքներով։

9. Աշխատանքային խումբն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են խմբի ղեկավարի կողմից, ըստ անհրաժեշտության, բայց առնվազն յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ։

10. Աշխատանքային խմբի նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում է խմբի անդամների կեսից ավելին։

11. Աշխատանքային խմբի նիստերը վարում է աշխատանքային խմբի ղեկավարը, իսկ նրա բացակայության դեպքում՝ խմբի անդամներից մեկը՝ նրա հանձնարարությամբ։

12. Աշխատանքային խմբի նիստի օրակարգը կազմվում և համապատասխան փաստաթղթերի հետ միասին տրամադրվում է խմբի անդամներին՝ գումարվող նիստից առնվազն 2 օր առաջ։

13. Աշխատանքային խմբի նիստի արձանագրություններն ստորագրում են աշխատանքային խմբի նիստին ներկա գտնվող բոլոր անդամները, իսկ եզրակացություններն ստորագրում է աշխատանքային խմբի ղեկավարը։

14. Աշխատանքային խմբի նիստերին կարող են հրավիրվել պետական մարմինների, միջազգային և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ։

15. Աշխատանքային խումբն առանձին հարցերի քննարկման գործում կարող է ներգրավել փորձագետների կամ մասնագետների, կամ՝ նախագիծը ներկայացնել մասնագիտական փորձաքննության։

16. Աշխատանքային խմբի աշխատանքների կազմակերպչական և նյութատեխնիկական ապահովումն իրականացնում է տրանսպորտի բնագավառում պետական լիազոր մարմինը։

17. Աշխատանքային խմբի ղեկավարը՝

1) ղեկավարում է աշխատանքային խմբի գործունեությունը.

2) նշանակում է աշխատանքային խմբի նիստի անցկացման օրը, վայրը և հաստատում նիստի օրակարգը.

3) հրավիրում և վարում է աշխատանքային խմբի նիստերը.

4) ստորագրում է աշխատանքային խմբի ընդունած որոշումներն ու արձանագրությունները, ինչպես նաև նրա գործունեության հետ կապված գրությունները.

5) ներկայացնում է աշխատանքային խումբն այլ մարմինների և անձանց հետ հարաբերություններում.

6) իրականացնում է սույն աշխատակարգից բխող այլ լիազորություններ։

18. Աշխատանքային խմբի անդամը՝

1) մասնակցում է աշխատանքային խմբի աշխատանքներին.

2) հարցեր և առաջարկություններ է ներկայացնում աշխատանքային խմբի քննարկմանը.

3) ներկայացնում է առաջարկություններ աշխատանքային խմբի գործունեության և նիստի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ.

4) ծանոթանում է աշխատանքային խմբի նիստերի արձանագրություններին.

5) ներկայացնում է աշխատանքային խմբի որոշումների վերաբերյալ գրավոր հատուկ կարծիք, որը կցվում է արձանագրությանը և համարվում դրա անբաժանելի մասը։ Գրավոր հատուկ կարծիքի մասին արձանագրության մեջ կատարվում է գրառում.

6) կատարում է աշխատանքային խմբի որոշումները և նրա ղեկավարի հանձնարարականները։

19. Աշխատանքային խմբի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ։ Ձայների հավասարության դեպքում խմբի ղեկավարի ձայնը վճռորոշ է։

20. Աշխատանքային խմբի գործունեությունը դադարում է Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ